կան հարցերի համար ինքն անձամբ պիտի զեկուցանէր ցարին, վոր Գոլովինին գրած թղթի համաձայն «բարի լուրեր» (ВСЯКИЯ ДОБРЫЯ ВѢСТИ) ուներ հաղորդելու. մի ուրիշ թղթի մեջ նույն կանցլերին գրում է. «քո հրամանոցդ հայտնի չէ, թե ինչ պատճառէ եմ այս երկրումս, բան և խօսք շատ ունիմ յամենայն կողմանէ, չեմ կարող գրել, յերբ որ Աստուծով ծառայութիւնդ հասայ, բերանով պիտի արզ անեմ»։ Ինչպես յերեւում է, սկսել եյին արդեն չարախոսել նրա մասին, ուստի և ցարին գրում է. «ծառայդ Իրանու երկրումս ինչ վոր արարել եմ և տեսել, ամէնն պատճառով է և սրանց պատճառի բան չեմ արարել. հիմա չեմ կարող գրել, երբ, որ ոտն համբուրելու հասայ, ամենն արզ կանեմ»[1]։

Սակայն Օրին չվհատվեցավ ներկայանալ ցարին. Նորա դեմ Աստրախանի նահանգապետ Ապրաքսինը թշնամական դիրք եր բռնել. բերած ապրանքի մի մասը ծովամոյն յեղավ նորա ուղարկած փտած նավի կոր ծանման պատճառով, ձիյերից չորս լավագույններն եյ ինքն եր գավթել, և անհատապակ աշխատում եր դժվարություններ հարուցանել Օրիի դեմ և վարկաբեկել։ Օրին մասամբ սկսել եր հաղթել այս դժվարությունները յուր գրած թղթերով Գոլովինին, ցարին, Մինաս վարդապետին, զույգ և հաջող դուրս գար յուր հնարագիտությամբ, յեթե անակնկալ մահը չկտրեր նորա կյանքի թելը և անհայտության չմատներ նորա աշխատանքի վախճանական ընթացքը[2]։ Նա վախճանվեցավ 1711թ. օգոստոսի վերջերին Աստրախանում, իսկ Յեսայի կաթողիկոսն ստիպվեցավ հետ դառնալ հայրենիք։

Նորա բովանդակալից կյանքի այս նկարագիրը ինքնատինքյան հայտարարն է նրա անձի, ընդունակությունների և հայրենասեր իղձերի։ Զարմանալի չէ, թե ինչպես Հայաստանի լեռներից Յեվրոպա ընկած պատանին հետզհետե կարողանում է սովորել շատ լեզուներ, հմտանալ դիվանագիտական և զինվորական արվեստների մեջ, կապեր հաստատել և նույնիսկ բարեկամական հարաբերության մեջ լինել աշխարհի ժամանակի բոլոր նշանավոր մեծամեծների հետ, վորոնցից կարող եր վոր և է բան սպասել յուր գործի համար։ Ապացուցված համարելով*, վոր Օրին չէ այլ և այլ լեզուներով յուր ստորագրությունը կրող թղթերի գրիչը, անկասկած է, սակայն, վոր նա չէ դրանց «հոգևոր ծնողը» ըստ եյության. փաստաթղթերից պարզ տեսնում ենք, վոր ամբողջ գործի շարժիչ և ուղղությունն տվող մեքենան Օրին է, վոր կարողանում է զարմանալի գրավչությամբ մարդկանց տրամադրել և յուր կողմը քաշել. Նա յուր գործի անշահասեր ծառան է, վոր զոհ է բերում նյութականի հետ յուր ընտանիքի բարեբաղդությունը, յուր ամբողջ եյությունը։ Հետաքրքրական է լսել Կուրֆյուրստի գծած բնութագիրը մելիքներին գրած թղթի մեջ*, վորպես «հավատարմագույն և ամենաընդունակ» մի մարդ, «վորը այս մեծ գործը Աստուծո շնորհիվ լցված, ի կատար պիտի ածե. և արժանի յէ վստահության, թե նորա խելքը և թե հաջողակությունը յուր գործելու գերազանց և անհամեմատելի յեղանակով. Աստված ընտրել է նորան այս գործի համար, վորի վախճանը այնպես նպաստավոր պիտի լինի Աստուծոյ փառքի, հոգիների փրկության, քրիստոնեական կրոնի, ձեր և ամբողջ Հայաստանի բարիքի համար»։

Բայց այսպիսի դրական կողմերի հետ նկատում ենք չափից ավելի լավատես վերաբերմունք դեպի գործի ապագա հաջողությունը, իրականին անհամապատասխան ծրագիրների առաջարկություններով, վոր մատնացույց արինք վերը։

Մենք չենք ուզում մարգարե լինել և գուշակել, թե ինչ կլիներ գործի վախճանը, յեթե այնպես անըսպասելի վրա չհասներ Օրիի մահը. բայց գիտենք, վոր կյանքն ու պայմանները ավելի զորեղ են քան մարդկանց ձգտումները ու իղձերը, և այդ ուժերն արդեն թելադրել եյին Օրիին յուր բանելիք ընթացքը. կյանքի վերջին օրերում նա այլ ռուսական քաղաքականության գործիք է Պետրոս մեծի ձեռքում։ Համենայն դեպս Պռոշյանց այս վերջին շառավիղը, վորով փակվում է նրանց նվիրված այս աշխատության պատմական մասը, յուր զգալի հետքն է թողել հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ, մեր յերկրի և ժողովրդի բաղդը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ։

---

1. Эзов. № 167. 169.՝ 200։

2. № 176. 183. 194, 174. 176. 180։

* Աշոտ Հովհաննիսյան. Հայ-ռուս Օրիենտացիայի ծագման խնդիրը. յեր. 30 և շ.։

** Эзов. № 14 յեր. 58... dominus Ory fidelissimus et capacissimus, qui grande hoc negotium, aspirante Dei gratia, ad effectum perducat, et sane meretur, ut totum illi confidatur, eusque prudentiae, dexteritati, et agendi modo absque comparatione praeclaro. Deus illum in hunc finem elegit, cuius succesus ita favet gloriae Dei, animarum saluti, religioni christianae, vestro ac totius Armeniae bono.